Սիգելների բնագիրն ավելի ընդարձակ էր լինում, քան նույն գործարքին պատկանող արձանագրությունները, բայց կան նաև հատ ու կենտ վիմական արձանագրություններ, որոնք սիգելի նման իրենց տակին կրում են նաև վկա եղող անձերի անունները «ես... վկայ եմ»։

Վանքերի «Քոթուկներից» և կալվածագրերից պարզվում է, որ բոլոր դեպքերում չէ, որ կալվածքների նվիրատվության մասին վիմական արձանագրություն է փորագրվել։ Տվյալների բացակայության պատճառով դժվարանում ենք ասել, թե բոլոր դեպքերում նվիրատվությունը հաստատվել է սիգելով *թե՞ ոչ։ Թվում է, որ երբ նվիրատվության դիմաց վանքի միաբանությունը ամեն տարի կատարվող պատարագ կամ ժամ է հատկացրել, այդ դեպքում սիգելը պարտադիր է եղել։ Սակայն այդ սիգելների իսկականները, մեծ մասամբ, չեն պահպանվել թղթի վրա գրված լինելու պատճառով. Մնացել են նրանց պատճենը «քոթուկ» գրքերի մեջ։ «Քոթուկ» գրքերը կազմելու միջոցին էլ սիգելներից շատերը չեն եղել, ուստի այդ գրքերի մեջ կալվածքների մասին տեղեկությունները քաղել են գլխավորապես վիմական արձանագրությունների տվյալներից։*

Տարընթերցում.— *1.* Դրիմ Վասակ *կարդացել է* Վարդան:

2. Ջալ ՈՂԲ *թվականը կարդացել է* ՈՂԹ:

Նկ. 68. Արձ. № 108:

108. Գրատան հս պատին դրսից

(Լուս. № 68)

Հ ՌՃԵ Մ 1656

Հրատարակված է՝ Ջալ 32, Դրիմ 66, Վիմ 186

1 *Կամաւ Ա̄յ, ես Թումանի որ-*

2 *դի Մանուչարս Նորոզեցի եկ-*